ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-058-07.07.2017-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ

ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	Պատգամավորներ Արփինե Հովհաննիսյան, Ռուստամ Մախմուդյան	Հոդված 1	***Հոդված 1.*** ~~Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 332-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում «միջամտելը» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ քրեական գործի լուծման համար նշանակություն ունեցող ապացույցները եւ այլ նյութերը՝ ոչնչացնելու կամ վնասելու եղանակով՝» բառերը:~~	
2	Պատգամավորներ Արփինե Հովհաննիսյան, Ռուստամ Մախմուդյան	Հոդված 2, 1-ին մաս	***Հոդված 2*** . Օրենսգրքի 338-րդ հոդվածում՝ 1) 2-րդ մասի 1-ին կետում՝ «հանցագործության մեջ մեղադրանքի առնչությամբ» բառերը փոխարինել «հանցագործության փաստի կապակցությամբ հարուցված քրեական գործի վարույթի~~ կամ մեղադրանքի առնչությամբ~~,» բառերով.	
3	Պատգամավորներ	Հոդված 2, 2-րդ մաս	2) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.	

	Արփինե Հովհաննիսյան, Ռուստամ Մախմուդյան		«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված արարքները կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե իր արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար, կամ նա մինչեւ նախաքննության մարմնի կողմից քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը ~~նախնական քննության ավարտը~~ կամ ~~դատական քննության ընթացքում մինչեւ~~ դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:»:	